

ԱՐԵՄՏԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Եմեի «Անսար Ալլահ» շարժումի լրատուական միջոցներ յայտարարեցին, թե ամերիկեան եւ բրիտանական օդանավեր ռմբակոծեցին Ջուռտյուայի օդակայանը եւ Սլէյֆ նաւահանգիստը:



ՄԻԶԱԹԻԻ ՆԵՑՈՒԿԸ ԶԱԺԺԱՐԻՆ

Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի կառավարության բոլոր նախարարություններն ու տնօրէնություններն պահանջեց գործադրել Գերագոյն ատենակիցի որոշումը:



Պատուիրի պաշտօնակատար Ժամալ Ալ Զաժժարի ուղարկած հրամանագիրը: Ըստ անոր, Լեռնալիբանանի դատաւոր Ղատա Աուն ազատ կը կացուցանուի կարգ մը թղթածրարներէ:

Ղատաւոր Աուն, իր կարգին, ապօրինի հռչակեց դատաւոր Զաժժարի հրամանագիրը ու հաստատեց, որ բողոք պիտի ներկայացնէ այդ որոշումին շուրջ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶԻՋԻ

Իսրայէլի Քնեսեթի ընդդիմադիր անդամ Ավիգլոր Լիպորովն յայտարարեց, թէ հիւսիսային սահմանին վրայ Իսրայէլի կառավարութիւնը կը զիջի Զըզալլային: Ուր



ամիս պատերազմէ ետք Իսրայէլ ներկայիս թաղուած է ամօթի մէջ, փոխան յաղթանակի: Իսրայէլ կորսնցուց հիւսիսային շրջանը ու կը զիջի Զըզալլային:

ԶԵՐԲԱՎԱԼՈՒԹԻՒՆ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Երէկ զինարձակութիւն տեղի ունեցաւ Պեյրութի Զորնիշ Մագրահա թաղամասին մէջ: Ըստ կարգ մը աղբիւրներու, ձերբակալուած է Ներքին ապահովութեան ուժէ:



րուն կողմէ փնտռուած անձ մը: Լիբանանեան բանակի հրամանատարութիւնը յայտարարեց, թէ հետապնդումի գործողութիւնը տեղի ունեցած է Զուլայի շրջանին մէջ եւ հրացանաձգութեան ետք ձերբակալուած են սուրիացիներ, որոնք զեղծարարութեամբ կը զբաղին:

«ՆԵՐՈՎՆԻԱՌՈՒ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՐԱԳՈՐԾ Է»

Միացեալ Նահանգներու գոնկրէսի ծախակողմեան անդամ Պեռնի Սանտորը յայտարարեց, թէ Իսրայէլի վարչա-



պետ Պենիամին Նեթանիահու պատերազմի ոճրագործ է ու ինչ ներկայ պիտի չըլլայ անոր ճաշին գոնկրէսին առջեւ: Պենիամին Նեթանիահու ճաշ պիտի արտասանէ ԱՄՆ-ի Գոնկրէսին առջեւ 24 Յուլիին: Ան հրաւեր ստացած է երկու կուսակցութիւններու ղեկավարութենէն:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Պաղեստինեան «ժիհադ Իսլամի» շարժումի զինեալ թէ «Սարայա Ալ Զուտա» յայտարարեց, թէ Կազայի հարաւային սահմանին վրայ ծանր ականանետերով թիրախ դարձուցած են գրահապատ կառքերու շարասիւն մը:

Անոնք նաեւ թիրախ դարձուցած էին Կազայի իսրայէլեան ընդհանուր հրամանատարութեան կեդրոնը Ռահիմ շրջանին մէջ:



«Ջամաս»ի զինեալ թէ «Ալ Զասամ» գումարտակը յայտարարեց, թէ Ռաֆահի գաղթականի շրջանին մէջ «Եասին 105» հակազրահապատ հրթիռով թիրախ դարձուցած է իսրայէլեան «Միքալա» հրասայլ մը:

Կազայի մէջ գործող պաղեստինեան իշխանութեան առողջապահութեան աղբիւրներ յայտարարեցին, թէ 7 Զոկտեմբեր 2023-էն ի վեր զոհերու թիւը հասաւ 36.731-ի, իսկ վիրաւորներուն թիւը՝ 83.530-ի: Վերջին 24 ժամերուն Իսրայէլ գործադրած է 8 սպանդ, որուն զոհ գացած են 77 անձ ու վիրաւորուած են 221 անձ:

ԿԱՆՅԻ ՄԱՍՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Զաթարի «Ալ ժազիրա» պատկերասփիւռի կայանը հաղորդեց, թէ Իսրայէլի կառավարութեան անդամ Պենի Կանց մամուլի ատուի պիտի տայ Շաբաթ օր: Իսրայէլեան լրատու աղբիւրներ կը նախատեսեն, որ ան ներկայացնէ իր հրաժարականը:



Պենի Կանց յայտարարած էր, թէ ուժ պետք է գործածել հիւսիսի սահմանին վրայ սպառնալիքը հեռացնելու համար եթէ քաղաքական լուծումը բացակայի: Կանց յայտարարած էր, թէ պիտի հեռանայ կառավարութենէն, եթէ վարչապետը մինչեւ 8 Յունիս իրեն չներկայացնէ Կազայի պատերազմին շուրջ ճանապարհային տրամաբանական քարտէս մը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆԱԲԱՍԱՏՈՅՑ ԵՐՈՐԳՈՒԹՅԱՒ

Ամերիկեան բանակը յայտարարեց, թէ նորոգուած է Կազայի ծովեզերքին վրայ հաստատած իր նաւամատոյ-



ցը: Ան վնասի ենթարկուած էր փոթորիկի մը ընթացքին: Այս նաւամատոյցին միջոցով օժանդակութիւն պիտի հասնի Կազա, ըստ ամերիկեան աղբիւրներուն:

ԻՆՐՈՒԱ ԿԸ ՊԱՅՆՆԵՐ

Միացեալ ազգերու Կազմակերպութեան պաղեստինցի գաղթականներու հարցերով զբաղող ԻՄՆՐՈՒԱ կազմակերպութիւնը պահանջեց քննութիւն բանալ բոլոր այն ռմբակոծումներուն, որոնք ենթարկուեցան իր կառոյցները



Կազայի մէջ, որոնք կը պատսպարեն գաղթականներ: Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարութեան խօսնակ Մեթիու Միլլըր պահանջած էր քննութիւն բանալ վերջին ռմբակոծումին շուրջ, որուն զոհ գացած էին 37 պաղեստինցի գաղթականներ:

ԿՈՊԻՏ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ

Յայաստանի Զանապետութեան Արտաքին գործերու նախարարութիւնը հրապարակեց յայտարարութիւն ուր ըսուած է, թէ Յայաստանի Զանապետութիւնը չունի որեւէ հողային պահանջ իր դրացիներէն: Յայաստանի Զանա-



պետութեան սահմանադրութիւնը եւ անոր փոփոխութիւնները Յայաստանի ներքին գործն են եւ անոր փոփոխութեան հոլովոյթին Ատրպէյճանի միջամտութիւնը կը համարուի կոպիտ միջամտութիւն երկրի ներքին գործերուն: Այս յայտարարութիւնը նաեւ կը վնասէ խաղաղութեան հոլովոյթին ու կասկածի տակ կը դնէ Ատրպէյճանի ղեկավարութեան՝ խաղաղութեան հասնելու անկեղծութիւնը:

Կողմերու կասկածները փարատելու միակ ճամբան խաղաղութեան համաձայնագրի ստորագրումն է, որ նոր էջ պիտի բանայ երկու երկիրներու յարաբերութեան մէջ, ըսուած է յայտարարութեան մէջ:

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ յայտարարած էր, թէ եթէ Յայաստան չփոխէ իր սահմանադրութիւնը անկարելի պիտի ըլլայ ստորագրել խաղաղութեան համաձայնագիր: Ըստ Ալիեւի, Յայաստանի Զանապետութեան սահմանադրութեան մէջ տակաւին կետեր կան, ըստ որոնց, Յայաստան հողային պահանջ ունի Ատրպէյճանէն:

ԶԱՅԱՍԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՒ ԱՆՂԱՍ Մ.Ա.Կ.-Ի ԿԱՌՈՅՅԻՆ



Յայաստան 148 քուէով ընտրուեցաւ Միացեալ ազգերու տնտեսական եւ ընկերային խորհուրդի անդամ 2025-2027 տարիներուն համար:

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԶԿԱՅ

ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղար Եսա Սթոլթենպըրկ յայտարարեց, թէ ներկայիս ռուսական սպառնալիք չկայ Ռուսիոյ անդամ երկիրներուն: Ըստ Սթոլթենպըրկի, յստակ



կեցուածքներն են որ առիթ չեն տար որեւէ թիրիմացութեան: Սթոլթենպըրկ յայտարարած էր նաեւ, թէ ՆԱԹՕ ծրագիր չունի ուժեր դրկելու Ուքրանիա: Այս հարցը Ռուսական Դաշնութեան կողմէ ընդունուած էր որպէս մեծ վտանգ ու ան սպառնացած էր դիմել թաքսիքական հիւլեական ուժերու՝ զսպելու համար Արեւմուտքի յարձակումը: Նախագահ Փութին նաեւ սպառնացած էր իր դաշնակիցները, որոնք ԱՄՆ-ի հակառակորդներ են, զինել որպէսզի կարենան հարուածել ԱՄՆ-ի դաշնակիցները:

ՌՈՒՍԻԱ ԿԸ ՅԱՌԱՋԱՆԱՅ

Ռուսական Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին յայտարարեց, թէ 2024 տարուան սկիզբէն ի վեր ռուսական բանակը մեծ յառաջխաղացք կատարած է Ուքրանիոյ արեւելեան կողմը գրաւելով 47 բնակավայր:

ԼԵՄԲԻՆԻ ՀԻՄՆԱՐԿԸ ՄԱԿ-ԻՆ ԿՈՉ ԿՂՆԷ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ COP29-Ը ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Լեմբինի անուան ցեղասպանության կանխարգիլման հիմնարկը յայտարարություն տարածած է՝ նշելով, որ դեմ է ՄԱԿ-ի որոշման՝ COP29-ը (Կլիմայի փոփոխության վերաբերյալ ՄԱԿ-ի ամենամեծ գագաթնաժողով) Ատրպեյջանի մեջ կայացնելու վերաբերյալ՝ հաշտության անընդունելի Լեմբինի Ղարաբաղի մեջ Պաքուի ցեղասպան ռազմավարությունը, կազմակերպած ցեղային գտումները, Ատրպեյջանի նախագահ Իլհամ Ալիևի ցեղասպան եւ հայատեաց զաղափարախոսությունը եւ փտածությունն ու մարդու իրաւունքներու ոտնահարման դեպքերը այդ երկրին մէջ:



Յայտարարության մէջ կ'ընդգծուի, որ Ատրպեյջանին շտրկելով այս կարելու իրադարձութիւնը հիւրընկալելու պատիւը՝ ՄԱԿ-ը հաւանութիւն կու տայ ցեղասպանական խօսքին, ցեղասպանական քաղաքականութեան եւ բռնապետութեան, որ ձեռնտու է ո'չ կլիմային, ո'չ ալ աշխարհի մարդոց:

«Ատրպեյջանին որպէս COP-29 գագաթնաժողովը հիւրընկալող երկիր ընտրելը օրինական, բանական եւ բնական կը դարձնէ ցեղասպանութիւնը համաշխարհային քաղաքականութեան մէջ: Ալիւին, այդ կը սպառնայ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային պայմանագրութեամբ հաստատուած սկզբունքներու արժանահատութեանը», - կ'ըսուի Լեմբինի հիմնարկի յայտարարության մէջ:

Լեմբինի հիմնարկը կը շեշտէ՝ ՄԱԿ-ը պետք է չեղարկէ COP29-ը Ատրպեյջանի մէջ կայացնելու որոշումը եւ գտնէ հիւրընկալող այլ երկիր:

Յայտարարութիւնը կը յիշեցնէ, որ Ատրպեյջանը՝ որպէս COP29-ը հիւրընկալող երկիր, ՄԱԿ-ի կողմէ ընտրուած է 2023 թուականի Դեկտեմբերին, երեք ամիս չանցած այն բանէն, երբ Պաքուն տասնամեծայ ցեղասպանական շրջափակումէ յետոյ Լեմբինի Ղարաբաղի հայերը ցեղային գտումներու ենթարկեց:

«Արցախէն գաղթը, որ վերջ դրու աշխարհի հնագոյն քրիստոնէական համայնքներէն մէկուն գրեթէ 4000-ամեայ շարունակական ներկայութեան, վերջին ժամանակներու ամենազոհեցիկ ցեղասպանութիւններէն մէկն էր: Արցախահայութեան դեմ Ատրպեյջանի «յաղթանակը» տօնելու համար նախագահ Ալիւն Լոյնիսկ խարոյկ վառեց Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ՝ Նովոուի մոթիթով՝ անուանելով գայն «վերջնական մաքրում», - կ'ըսուի յայտարարության մէջ:

Լեմբինի հիմնարկը իր յայտարարության մէջ պատմական ակնարկ կը կատարէ՝ յիշեցնելով 2020 թուականին Լեմբինի Ղարաբաղի դեմ Ատրպեյջանի սանձազերծած պատերազմին մանրամասնութիւնները:

«Կարելի չէ մոռնալ, որ 2020 թուականի Ատրպեյջանի եւ Արցախի միջեւ պատերազմին ժամանակ ատրպեյջանացի զինուորները մեղաւոր եղած են զինաթափուած հայ զինուորներու, ինչպէս նաեւ հայ խաղաղ բնակիչներու, այդ շարքին՝ տարեցներու եւ հաշմանդամներու նկատմամբ ծայրայեղ եւ սարսափելի վայրագութիւններու մէջ: Այս փաստագրուած վայրագութիւնները կը ներառեն զլիսատումներ, հայերու անդամահատումներ՝ դեռ կենդանի ժամանակ, խոշտանգումներ եւ նուստացումներ՝ բացառապէս անոնց ինքնութեան պատճառով: Երբ 2022 թուականին Ատրպեյջանը նախադրեց արտագրգում սկսալ Քայաստանի դեմ, ան նման վայրագութիւններ կատարեց՝ ներառելով հայ կանանց նկատմամբ սեռային բռնութեան կիրառումը եւ զինաթափուած հայ զինուորներու կոտորածը: Այս յանցագործութիւններուն համար պատասխանատուութիւն չէ եղած: Անոնց կը յիշեցնեն 1915-1923 թուականներուն թրջական եւ ատրպեյջանական զօրքերուն, ժանտարմներուն, զինուորներուն եւ քաղաքացիական անձերու կողմէ հայերու նկատմամբ իրականացուած ցեղասպանական վայրագութիւնները եւ կ'օգնեն բացատրելու, թէ ինչու Ատրպեյջանի համար այդպէս հեշտ էր արցախցի հայերը սիսթեմատիվ, գանձեց փախուստի մատնելը՝ ներխուժելով այդ տարածք 2023 թուականի Սեպտեմբեր 19-ին», - ըսուած է հաղորդագրության մէջ:

Լեմբինի հիմնարկը նաեւ կը շեշտէ, որ բացի տարած ամիս Լեմբինի Ղարաբաղի մատուցուած 120 հազար հայերը շրջափակելէ, տարածք ներխուժելու եւ բնակչության գրեթէ ամբողջութիւնը փախուստի մատնելէ, Ատրպեյջանը նաեւ մեթոտաբար կ'դնչւնացնէ Լեմբինի Ղարաբաղի հայկական մշակութային ժառանգութիւնը:

«Եթէ այս ուղղութեամբ ոչինչ ձեռնարկուի, Արցախը պիտի դառնայ Նախիջեանի պէս. ատրպեյջանական արտագաւառ, որ ժամանակին ունեցած է զգալի հայ բնակչութիւն, իսկ հիմա չունի, ուր Ատրպեյջանը արդէն ոչնչացուցած է հայկական մշակութային ժառանգութեան մօտ 98 տոկոսը՝ ներառելով եկեղեցիները, գերեզմանները եւ վանքերը», - կը նշէ Լեմբինի հիմնարկը:

Վերջինիս տարածած յայտարարության մէջ ուշադրութիւն կը կրուի նաեւ Ատրպեյջանի կողմէ ապօրինի պահուող հայ գերիներու անկայութեան վրայ, որոնց շարքին են նաեւ Լեմբինի Ղարաբաղի նախկին ռազմաքաղաքական ղեկավարները:

«Այս յանցագործութիւններէն բացի, Ատրպեյջանը կը

շարունակէ ապօրինի ձեռնարկուած պահել հայ ռազմագերիները, քաղաքացիական անձեր եւ Արցախի կառավարության՝ ժողովրդավարական ճանապարհով ընտրուած անդամները, ընդ որում՝ «Արորա» մարդասիրական նախաձեռնութեան համախիմնադիր Ռուբէն Վարդանեանը: Յայ պատանդներու նկատմամբ խոշտանգումներու կիրառման մասին կան ամուր սպառնալուքներ», - յայտարարած է հիմնարկը:

Լեմբինի հիմնարկը կը նշէ, որ Ատրպեյջանը պարբերաբար կը խախտէ միջազգային իրաւունքը՝ անտեսելով միջազգային դատարաններու պայմանագրերն ու վճիռները:

«2022 թուականի պատերազմը Քայաստանի դեմ, Արցախի տասնամեծայ շրջափակումը եւ 19 Սեպտեմբերին Արցախ ներխուժումը 2020 թուականի Նոյեմբերին Ատրպեյջանի, Քայաստանի եւ Ռուսաստանի կողմէ համաձայնեցուած հրադադարի եռակողմ յայտարարութեան խախտումներն էին: Ալիւին, Ատրպեյջանը անտեսած է խախտած է Արդարադատութեան միջազգային դատարանին կողմէ 2021 թուականի Դեկտեմբեր 7-ին, 2023 թուականի Փետրուար 22-ին, 2023 թուականի Յուլիս 6-ին եւ 2023 թուականի Նոյեմբեր 17-ին նշանակուած ժամանակակուր միջոցները», - կը նշուի յայտարարության մէջ:

Լեմբինի անուան ցեղասպանության կանխարգիլման հիմնարկը նաեւ անհրաժեշտ կը համարէ նշել, որ Ատրպեյջանը ունի մարդու իրաւունքներու ամսխիթար վիճակ, որ երթալով աւելի կը վատանայ:

«2023-էն մինչեւ 2024 թուականը Ատրպեյջանի ագտութեան ցուցանիշը նուազած է 2 կետով՝ 9-էն հասնելով 7-ի (100-էն), ինչ որ գայն կը դարձնէ աշխարհի ամենամեծատիրական կառավարութիւններէն մէկը: Ալիւին, Ատրպեյջանի եւ Ալիւի վարչակարգին գործողութիւնները հողօգտագործման եւ բնական կլիմայի պահպանման հարցով ուղղակիօրէն կը հակասեն COP29 համաժողովի հիմքին ինկած հիմնարար սկզբունքներուն: Ատրպեյջանը ոչ միայն քարիւղային պետութիւն է, որ կը հենի հանածոյ վառելանիւթի արտահանման վրայ, այլեւ Ատրպեյջանի պետական ուժանիւթային եւ բնական պաշարներու արդիւնաբերութիւնը լի է փտածութեամբ, ինչ որ երկիրը ուղղակիօրէն կը հակադրէ COP29-ի յայտարարուած նպատակներուն», - կ'ըսուի յայտարարության մէջ:

Լեմբինի հիմնարկը անհեթեթ, ամօթալի եւ խորապէս անպատկառ կը համարէ ատրպեյջանցի պաշտօնեաներուն այն ակնդումները, թէ իրենք կը փափաքեն «COP29-ը դարձնել խաղաղութեան ոստիկան»:

«Եթէ Ատրպեյջանը իսկապէս կը փափաքի ցոյց տալ իր յանձնառութիւնը խաղաղութեան կառուցման, ապա պետք է անյապաղ ազատ արձակէ քաղաքական բանտարկեալները: Եթէ այս փոքրիկ քայլը հնարաւոր չէ ընել, ապա անոնց իրական մտադրութիւնները պարզ են: Այն ժամանակ, երբ աշխարհի բնակչութիւնը կորսնցուցած է հաւատը միջազգային կառույցներուն հանդէպ, ՄԱԿ-ը պետք է զլուխը հանէ արագ եւ դարձեցնէ ցեղասպան պետութեան դիւանագիտական հովանաւորութիւնը՝ սկսած COP29-էն», - եզրափակած է Լեմբինի հիմնարկը:

ՀՈՒՍԻՆԵՐԸ ԶԵՐԲԱՎԱԿԱԾ ԵՆ ՄԱԿ-Ի ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՆԻ ՄԸ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Եմնցի հուսի խռովարարները ձեռնարկուած են ՄԱԿ-ի հիմնարկութիւններուն մէջ աշխատող աշխատող 9 մարդ: Զեռքակալուածների շարքին կան ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու վարչության, Պարէնի համաշխարհային ծրագրի աշխատողներ եւ ՄԱԿ-ի յատուկ դեսպանորդի գրասենեակի մէկ աշխատակից:



Հուսիները նման գործողութիւններու պատճառներուն մասին չեն հաղորդած:

ՄԱԿ-ը առայժմ չէ հաստատած այս տեղեկատուութիւնը: «Անսար Ալլախ» զինուած խռովարար խմբաւորումը, որուն անդամները նաեւ կը կոչեն հուսիներ, ներկայիս կը վերահսկեն Եմնի մեծ մասը, ներառելով մայրաքաղաք Սանաան, ինչպէս նաեւ երկրի հիւսիսային եւ արեւմտեան որոշ տարածքներ Սեուտական Արաբիոյ մերձակայքը: Պաղեստինեան «Յամաս» շարժման ներխուժումէն յետոյ Իսրայէլի պատասխան ռազմական գործողութիւններու ընթացքին հուսիները կը թիրախաւորեն Կարմիր ծովով անցնող նաւերը՝ պահանջելով, որ Իսրայէլը դադրեցնէ գործողութիւնները Կազայի հատուածին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՊԻՏԻ ԿԱՅԱՆԱՅ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՇԱԲԱԹ

Քայաստանի մէջ 2024 թուականին պիտի ստեղծուի գիտութեան հանրահոջակման համազգային հարթակ՝ Գիտութեան շաբաթ:



Այս մասին յայտնած են «Գիտութ» նախաձեռնութեան գրասենեակէն, մակրամասնելով որ Գիտութեան շաբաթը հասարակութեան տարբեր շերտերուն համար նախատեսուած բազմաձեւապի միջոցառումներու շարք է, որուն նպատակն է համազգային մակարդակով հանրահոջակել գիտութիւնն ուարիետագիտութիւնները, բացատրել վերջիններուն անփոփարիկ ղերը եւ նշանակութիւնը ժամանակակից աշխարհին մէջ, գիտութիւնը դարձնել իրապարիչ երիտասարդներու համար, ինչպէս նաեւ խթանել ընկերապետական մտքի եւ գիտելիքահեղ խօսույթի զարգացումը:

Գիտութեան շաբաթը տեղի պիտի ունենայ Երեւանի եւ բոլոր մարզերուն մէջ, 1-6 Հոկտեմբերին:

Քայաստանի մէջ առաջին Գիտութեան շաբաթը պիտի խորհրդանշէ գիտութեան եւ հասարակութեան միջեւ կապը:

«Ստեղծելով գիտութիւնը հասարակութեան», սա ե՛լ այս տարուան թեման է, ե՛լ այն առանցքային նպատակը, որուն ուղղուած պիտի ըլլայ Գիտութեան շաբաթ նախագիծը:

Գիտութեան շաբաթուան ընթացքին կը նախատեսուի կայացնել ապակեդրոնացուած միջոցառումներ մանկապարտեզներու, դպրոցներու ու համալսարաններու մէջ: Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ բոլոր 6 օրուան ընթացքին տեղի պիտի ունենայ Գիտութեան փառատոս, որ բաժանուած պիտի ըլլայ 3 թեմատիկ մասերու.

- 1. Գիտութիւնը ամենօրեայ է՝ 1-2 Հոկտեմբեր
 - 2. Մասնագիտական կողմնորոշում՝ 3-4 Հոկտեմբեր
 - 3. Գիտական երեւակայածին միտք՝ 5-6 Հոկտեմբեր
- Գիտութեան շաբաթ նախագիծը միջազգային ձեւաչափ է: Այն պիտի նախաձեռնէ եւ իրականացնէ «Գիտութ» նախաձեռնութիւնը՝ ՀՀ Կրթութեան, Գիտութեան, մշակույթի եւ մարմնամարզի նախարարութեան եւ ՀՀ Գիտութիւններու ազգային ակադեմիային հետ համագործակցութեամբ:

Գիտութ նախաձեռնութեան առաքելութիւնն է հզօրացնել Քայաստանը գիտութեան եւ արհեստագիտութիւններու միջոցով: Գիտութեան հանրահոջակման համազգային միասնական հարթակ ստեղծելը այս առաքելութեանը հասնելու կարելու քայլերէն մէկն է:



BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh,
Tel.: 01-870016



ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԱՍԻՈՅ 2ՏՈՒՄԻ 5-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Տեղի ունեցան Ասիոյ Աշխարհի ֆուտբոլի բաժակի գտումի Բ. փուլի եզրափակիչի 5-րդ հանգրուանի մրցումները: 36 հաւաքականներ բաժնուած են ինը խմբակի: Գ. փուլ կայանքը անցան խմբակներու առաջին երկու դիրքերը գրաւած 18 հաւաքականները: Յարդ իրենց տոմսերը ապահոված են՝ Զաթար, Ճափոն, Զար. Զորեա, Օման, Իրան, Իւզվեթիստան, Իրաք, Մեուտ. Արաբիա, Յորդանան, Արաբ. Միացեալ Եմիրիթներ, Պահրէյն, Աւստրալիա եւ Պաղեստին: Բ. խմբակին մէջ, 2-րդ դիրքը գրաւող Սուրիա վտանգեց իր դիրքը, երբ զիջեցաւ 3-րդ դիրքը գրաւող Զինսիսային Զորեային: Թ. խմբակին մէջ, 3-րդ դիրքը գրաւող Լիբանանի հաւաքականը մրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող Պաղեստինի դէմ ու մրցումը աւարտեցաւ առանց կողերու: Պաղեստին 8 կէտով գրաւեց 2-րդ դիրքը, մինչ Լիբանան 3 կէտով մնաց 3-րդ դիրքին վրայ ու դուրս մնաց յետագայ պայքարէն: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Զնդկաստան - Զուէյթ 0-0
- Աֆղանիստան - Զաթար 0-0
- Բ. խմբակ.** - Միանմար - Ճափոն 0-5
- Զիւս. Զորեա - Սուրիա 1-0
- Գ. խմբակ.** - Սինկափուր - Զար. Զորեա 0-7
- Զինաստան - Թայլենտ 1-1
- Դ. խմբակ.** - Թայուան - Օման 0-3
- Զիրկիզիա - Մալդիւա 1-1
- Ե. խմբակ.** - Զոնկ Զոնկ - Իրան 2-4
- Իւզվեթիստան - Թիրքմենիստան 3-1
- Զ. խմբակ.** - Իստոնեգիա - Իրաք 0-2
- Վիեթնամ - Ֆիլիպին 3-2
- Է. խմբակ.** - Յորդանան - Թաճիքիստան 3-0
- Փաքիստան - Մեուտ. Արաբիա 0-3
- Ը. խմբակ.** - Նեփալ - Արաբ. Միաց. Եմիր. 0-4
- Պահրէյն - Եմեն 0-0
- Թ. խմբակ.** - Պանկլաւտէջ - Աւստրալիա 0-2
- Պաղեստին - Լիբանան 0-0

ՍՈՐԻՍ ՌԵՎԵԼԼՕ ՄՐՅԱՇԱՐՔԻ Ա. ԴԱՆՊՐՈՒՄԸ ԻՏԱԼԻԱ ԴՅՈՒՄԱՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՂԹՅ

Ֆրանսայի ֆուտբոլի մարզադաշտերուն վրայ շարունակուեցան «Սորիս Ռեվելո»-ի անուան տարեկան երիտասարդական մրցաշարի մրցումները: Մասնակցող տաս հաւաքականները բաժնուած են երկու խմբակի: Իւրաքանչիւր խմբակի առաջին դիրքը գրաւող հաւաքականը պիտի մրցի աւարտական մրցումին: Բ. խմբակի առաջին մրցումին, Իտալիոյ մինչեւ 20 տարեկան հաւաքականը մեծ դժուարութեամբ յաղթեց ճափոնին: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Փղ. Ափունց 2 մ 6 կէտ 4-1, 2) Մեուտ. Արաբիա 1 մ 3 կէտ 2-0, 3) Մեքսիքա 1 մ 3 կէտ 2-2, 4) Ֆրանսա 2 մ 0 կէտ 2-4, 5) Զար. Զորեա 2 մ 0 կէտ 1-4
- Բ. խմբակ.** - Իտալիա - Ճափոն 4-3
- Իստոնեգիա - Ուքրաինա 0-3
- Ուքրաինա - Իտալիա 4-0
- Իստոնեգիա - Փանամա 0-4
- Դասաւորում.** 1) Ուքրաինա 2 մ 6 կէտ 7-0, 2) Փանամա 1 մ 3 կէտ 4-0, 3) Իտալիա 2 մ 3 կէտ 4-7, 4) Ճափոն 1 մ 0 կէտ 3-4, 5) Իստոնեգիա 2 մ 0 կէտ 0-7

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԸՆՏԱՍԵԱՑ-Ի 2ՏՈՒՄԻ Ա. ԴԱՆՊՐՈՒՄԸ ՔԻՐԱՍԱՑ ԵՒ ԿՈՒԹԵՄԱԼԸ ՅԱՂԹՅԻՆ

Շաբթուան ընթացքին սկսան Զինսիսային, Կեդրոնական Ամերիկայի եւ Զարիպեան Շովու Աշխարհի ֆուտբոլի բաժակի գտումի երկրորդ փուլի մրցումները: 30 հաւաքականներ բաժնուած են վեց խմբակի: Երրորդ փուլ պիտի անցնին խմբակներու առաջին երկու դիրքերը գրաւած 12 հաւաքականները: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Անթիպուա եւ Պարպուէ - Պերմիտա 1-1
- Զոնտուրաս - Զուպա 3-1
- Բ. խմբակ.** - Թրինիտատ եւ Թուպալո - Կրեմատա 2-2
- Զուպա Ռիքա - Մեյք Քիջ Էլտ Նեվիս 4-0
- Գ. խմբակ.** - Զիւրասաս - Պարպատոս 4-1
- Զայիթի - Մեյք Լիսիս 2-1
- Դ. խմբակ.** - Նիքարակուա - Մոնթսերաթ 4-1
- Փանամա - Կույանա 2-0
- Ե. խմբակ.** - Կուլաթմալա - Տոմինիքա 6-0
- Ճամայքա - Տոմինիքեան Զանթ. 1-0
- Զ. խմբակ.** - Սիւրինամ - Մեյք Վիսկոնթ 4-1
- Էլ Սալվատոր - Փորթո Ռիքո 0-0

ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԱՓՐԻԿԵԻ 2ՏՈՒՄԻ 3-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ ԹՈՒՆՈՒՅ ՅԱՂԹԱԿԱՆ

Շաբթուան ընթացքին սկսան Ափրիկայի Աշխարհի ֆուտբոլի բաժակի գտումի 3-րդ հանգրուանի մրցումները: 54 հաւաքականներ բաժնուած են ինը խմբակի: Աւարտական փուլ պիտի անցնին խմբակներու առաջին դիրքերը գրաւած 9 հաւաքականները ու 2-րդ դիրքը գրաւած խումբերէն մաս մը: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Սիերրա Լեոնէ - Ճիպուրթի 2-1
- Եգիպտոս Պուրքիսա Ֆասօ 2-1
- Կինիա-Պիսաու - Եթովպիա 0-0
- Բ. խմբակ.** - Թնյո - Զար.Սուտան 1-1
- Սենեկալ - Դեմ.Զոնկո 1-1
- Մալդիւաիա - Սուտան 0-2
- Գ. խմբակ.** - Պենի - Ռուանտա 1-0
- Դ. խմբակ.** - Լիպիա - Մորիշիս 2-1

- Ե. խմբակ.** - Ալճերիա - Կինիա 1-2
- Ը. խմբակ.** - Նամիբիա - Լիպերիա 1-1
- Թունուզ - Զասարակ.Կինիա 1-0
- Մալուրի - Սաօ Թոմէ եւ Փրինսիփ 3-1
- Թ. խմբակ.** - Կեդր.Ափր.Զանթ. (5) - Չատ (6) 1-0
- Մալի - Դանա 1-2

ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՍՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ ՍԼՈՎԵՆԻԱ - ԶԱՅԱՍԱՆ 2-1

Շաբթուան ընթացքին տեղի ունեցան ֆուտբոլի միջազգային բարեկամական մրցումներ որպէս նախապատրաստութիւն Գամաբամասային մրցաշարքերու: Այս մրցումներուն, Զայաստանի հաւաքականը մրցեցաւ Սլովենիոյ մէջ երկրի հաւաքականին դէմ: Զայաստանը յաջողեցաւ 11-րդ վայրկեանին, Իտալիոյ ք. դասակարգի



«Փիզա»-ի յարձակող Սլաթար Նշանակեց Սլովենիոյ կողմէն: Երկրորդ կիսախաղին սկիզբը Զայաստանի հաւաքականը աշխուժացաւ եւ 56-րդ վայրկեանին Զինաստանի «Քինկ-տաօ Վեթ Զոսթ»-ի պաշտպան Վարազդատ Զարոյեան հաշիւը դարձուց 1-1, Ռուսիոյ «Քրասնատար»-ի կիսապաշտպան Էտուարտ Սփերցեանի փոխանցումով: Սակայն, 63-րդ վայրկեանին, «Մարիպոր»-ի կիսապաշտպան Իլչիչի հաշիւը դարձուց 2-1, Իտալիոյ «Սամփտորիա»-ի պաշտպան Սթոյանովիչի փոխանցումով: Սլովենիա տարու ղժուար յաղթանակ մը պայքարող կազմի մը դէմ: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Սլովենիա - Զայաստան 2-1
- Չուիցերիա - Եսթոնիա 4-0
- Ռումանիա - Պուկարիա 0-0
- Փորթուկալ - Ֆինլանտա 4-2
- Իրլանտա - Զոնգարիա 2-1
- Աւստրիա - Սերպիա 2-1
- Իտալիա - Թուրքիա 0-0
- Սլովաքիա - Սան Մարինո 4-0
- Դանիա - Շուէտ 2-1
- Նորվեկիա - Զոստօ 3-0
- Պելճիքա - Մոնթենէրո 2-0
- Ֆրանսա - Լիքսեմպուրկ 3-0
- Սպանիա - Անտորրա 5-0
- Մեքսիքա - Ուրուկուէ 0-4
- Ճիպարաթար - Կալէս 0-0
- Զոլանտա - Գանատա 4-0

ՌՈՒՍԻՈՅ ԱՆՈՅԵՍՆՈՒԹԵԱՆ 30-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ ՉԵՆԻԹ ՇԱՂԵՅԱՒ ՏԻՏՐՈՍԸ

Ռուսիոյ ֆուտբոլի ախոյեանութեան վերջին՝ 30-րդ հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, կիսապաշտպան Էտուարտ Սփերցեանի մաս կազմած 3-րդ դիրքը գրաւող «Քրասնատար»-ը իր դաշտին վրայ յաղթեց առաջատար «Տիլանո Մոսկուա»-ին ու պատճառ դարձաւ որ ան նահանջէ ու «Զենիթ»-ը յաղթանակ արձանագրելով գրաւեց առաջին դիրքը ու շահի տիրողը: Սփերցեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին: 52-րդ վայրկեանին, գոլումպիացի յարձակող Ջորտոպա Նշանակեց միակ կողմ, ուրուկուէյցի պաշտպան Օլազալի փոխանցումով: Կիսապաշտպան Խորէն Պայրամեանի մաս կազմած 7-րդ դիրքը գրաւող «Ռոսթով»-ը իր դաշտին դուրս գիջեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Զենիթ»-ին: Պայրամեան դաշտ մտաւ 90-րդ վայրկեանին: «Սոչի» եւ Տրաքտան Կլանսեանի մաս կազմած Զալիկինկրատի «Պալիքս»-ը գրաւեցին 16-րդ եւ 15-րդ դիրքերը ու հրաժեշտ տուին Ա. դասակարգին, իսկ Շառնկեանի մաս կազմած «Նիժնի Նովկորոտ»-ը եւ Եքսթերնալուրկի «Ուրալ»-ը գրաւեցին 13-րդ ու 14-րդ դիրքերը եւ փլէյ-օֆ պիտի խաղան Բ. դասակարգի Թակվաթիի «Աքրոն»-ին, որուն մաս կը կազմէ կիսապաշտպան Արթուր Կալոյեան ու Թուրայի «Արսենալ»-ին դէմ պահելու համար իրենց դիրքերը: Մոսկուայի «Լիպի»-ն եւ Մախաչքալայի «Տիլանո»-ն բարձրացան Ա. դասակարգ: Թուրայի «Արսենալ»-ին մաս կը կազմեն կիսապաշտպան Իշխան Կելոյեան եւ երիտասարդ յարձակող Արտեմ Յարուրիւնով: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Քրասնատար - Տիլանո Մոսկուա 1-0
- Չենիթ Ս. Փեթեր. - Ռոսթով 2-1
- Կրիլիա Սովետով Սամ. - Նիժնի Նովկորոտ 1-1
- Պալիքս Զալիկինկրատ - Լոքոմոթիւ Մոսկուա 1-3
- ԲԿՄՍ Մոսկուա - Ուրալ Եքսթ. 2-0
- Ռուսիան Զազան - Սոչի 1-1
- Ֆաթել Վորոնեժ - Ախմաթ Կրոզնի 2-0
- Օրենպուրկ - Սպարտակ Մոսկուա 0-0
- Դասաւորում.** 1) Չենիթ 57 կէտ 52-27, 2) Քրասնատար 56 կէտ 45-29, 3) Տիլանո Մոսկուա 56 կէտ 53-39, 4) Լոքոմոթիւ Մոսկուա 53 կէտ 52-38, 7) Ռոսթով 43 կէտ 43-46, 8) Ռուսիան 42 կէտ 31-38, 13) Նիժնի Նովկորոտ 30 կէտ 29-51, 15) Պալիքս 26 կէտ 33-42:

- Ռմբարկուներ. 1) Մ.Զախերա - Չենիթ 21 կոլ, 2) Ճ.Զորտոպա - Քրասնատար 15 կոլ, 3) Բ.Թիլիպալի - Տիլանո Մոսկուա 15 կոլ, 6) Է.Սփերցեան - Քրասնատար 11 կոլ:

ԶԱՅԱՍԱՆԻ ԶԱՄԱՔԱԿԱՆԸ ԸՆԴԴԵՄ ԼԻԲԱՆԱՆԻ ԶԱՄԱՔԱԿԱՆԻՆ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնին հրաւերով Երեւանի մարզադաշտին, Պեյրութի ժամանեց Զայաստանի ֆուտբոլի 19 տարեկանէն վար հաւաքականը, կատարելու երկու բարեկամական մրցումներ, Լիբանանի 19 տարեկանէն վար հաւաքականին հետ:



Զայաստանի հաւաքականը կը գլխաւորէ տնօրէն Սուրեն Շախալեան եւ մարզիչ Վահագն Մինասեան, եւ բաղկացած է 30 հոգիէ, 22 մարզիկ եւ հաւաքականներու պատասխանատու Միքայէլ Զարթեթեան:



Առաջին մրցումը տեղի ունեցաւ Զինգաթի, 6 Յունիս 2024-ին, Սաֆայի մարզադաշտին վրայ եւ վերջ գտաւ 3-0 արդիւնքով ի նպաստ հայրենի խումբին: Կոլերը նշանակեցին Լարէկ Յովհաննիսեան (2 կոլ) եւ Արթուր Արդիպեան:

Օրուան իրաւարարն էր Ուսէլ Զայտար: Մրցումին ներկայ էր 33 դեսպանատան ամբողջական անձնակազմը:

Յաջորդ մրցումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 9 Յունիս 2024-ին, կեսօրէ ետք ժամը 5:00-ին, Ֆուտա Ըղիսապ մարզադաշտին վրայ, ժուկի:

ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԸՆՏԱՍԵԱՑ-Ի 2ՏՈՒՄԻ 2-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ:**
- 22:00 Պրիթիշ Վիրճին (3) - Կուլաթմալա (1)
- 22:30 Անկուիլա (2) - Սիւրինամ (1)
- 23:30 Քէյմեն (4) - Անթիպուա (3)
- 00:30 Պահամ (3) - Թրինիտատ եւ Թուպալո (2)
- 03:00 Արուպա (3) - Զիւրասաս (1)
- 03:30 Պելիզ (3) - Նիքարակուա (1)

- ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԱՓՐԻԿԵԻ 2ՏՈՒՄԻ 3-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ:**
- 16:00 Զամբուի (2) - Զապօ Վերսէ (3)
- 19:00 Կամպիա (5) - Սէյշել (6)

ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՍՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ ՍԼՈՎԵՆԻԱ - ԶԱՅԱՍԱՆ (83)

- 16:00 Սլովենիա (57) - Պուկարիա (83)
- 19:00 Մոլտովա (153) - Կիպրոս (124)
- 19:00 Չուիցերիա (19) - Աւստրիա (25)
- 19:00 Շուէտ (27) - Սերպիա (33)
- 19:00 Զոնգարիա (26) - Իտալիա (78)
- 19:45 Փորթուկալ (6) - Խրուաթիա (10)
- 20:30 Դանիա (21) - Նորվեկիա (47)
- 21:00 Պելճիք (3) - Լիքսեմպուրկ (87)
- 22:30 Սպանիա (8) - Զիւս.Իրլանտա (73)
- 00:30 ԱՄՆ (11) - Գոլոմպիա (12)
- 04:00 Մեքսիքա (14) - Պրագի (5)

ՍՈՐԻՍ ՌԵՎԵԼԼՕ ՄՐՅԱՇԱՐՔԻ 3-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ 15:00 Ճափոն (4) - Իստոնեգիա (5)

- 18:30 Ուքրաինա (1) - Փանամա (2)
- ԸՈՓԱ ԼԻՊԵՐՏԱՏՐԵՍԻ ԿԱՓ. 5-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ**
- 01:00 Կրեմիո (2) - Եսթիտիանլէթս (4)
- ԸՈՓԱ ՍԻՏԱՍԵՐԻԵՆԱՅԻ ԿԱՓ. 5-ՐԴ ԴԱՆՊՐՈՒՄԸ**
- 03:30 Ինթերնասիոնալ (3) - Տելֆին (2)
- ԱՐՄԱՆԹԻՆԻ ԲԱԺԱԿԻ 1/16-ՐԴ ԱՄԱՐՏ.**
- 23:20 Փալթեսէ (17) - Զուրպալ (3)
- ՍԱՌԻ ԶՈՔԻ «ՍԹԵՆԼԻ ԸՈՓ» ԿԱՓ. Ա.ՄՐՑ.**
- 03:00 Ֆլորիտա Փեկերըզ (1) - Էտմոնթի Օլլոըզ (2)
- ԹԵՆԻՍԻ ՖՐԱՆՏԱՅԻ ԲԱՑ ՄՐՑ. ԿԻՆԵՐՈՒ ԱՄԱՐՏ.**
- 11:00-Էն սկսեալ, «beinsports» կայանէն
- ԴԵՏԵԼԱՐՇԱՒ**
- 12:30 Criterium Du Dauphine շրջակազք, «eurosport»-Էն
- 14:15 Tour of Britain Women շրջակազք, «eurosport»-Էն
- ԱՍԵՆԹԻԶ**
- 12:05, 20:00 Եւրոպայի Աթլետիկայի ախոյեանութիւն, «eurosport» կայ.
- ԸՐԻՔԵՑ**
- 18:30, 21:00, 03:30 Աշխարհի ախոյեանութիւն, «STARZPLAY» կայ.

www.araraddaily.com

ARARAD DAILY NEWSPAPER
 MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN
 Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
 Beirut | Lebanon | www.araraddaily.com
 email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المديرية المسؤولة: أنى صرافيان
 تصدر عن شركة ماسبيبر المناقفة والنشر (ش.م.م.)